ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ
ՊԱՇՏՊԱՆԵԼ ԿԱՐԵՒՈՐԸ

IRON MOUNTAIN®

ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՄԵՆՔ ԱՊՐՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐՈՎ ԱՄԵՆ ՕՐ, ԱՄԵՆՈՒՐ ՈՒՐ ԳՈՐԾՈՒՄ ԵՆՔ:

- Բիլ Մինի, գլխավոր տնօրեն

Գլխավոր տնօրեն Բիլ Մինիի ուղերձը

Համակից Mountain-ցի,

Վստահություն: Այն դժվար է վաստակել և հեշտ է կորցնել: Ահա արդեն գրեթե յոթ տասնամյակ մեր արժեքները և այն, թե ինչպես ենք մենք դրանք իրագործում, հաճախորդների, մատակարարների և բաժնետերերի՝ մեզ վստահելու գրավականն են: Մեր արժեքները հետևողականորեն ուղղորդում են մեր վարքագիծը և գաղափարներ են, որոնք մենք համարում ենք ամենակարևորը՝

Գործել ազնվությամբ, **Սեփական ապահովություն և անվտանգություն**, **Կառուցել արժեքներ հաճախորդների համար**, **Ստանձնել պատասխանատվություն** և **Խթանել ներառականությունը և թիմային աշխատանքը**:

Այս Կանոնակարգն այն մասին է,, թե ինչպես ենք մենք կիրառում այդ արժեքները:

Այն մեզ վստահություն է ներշնչում, հատկապես իրավական և էթիկական որոշումներ կայացնելիս: Այն օգնում է մեզ համապատասխանություն ապահովել մեր բիզնեսի վրա ազդող օրենքներին, կանոններին և կանոնակարգերին: Այն առաջնորդում է մեր ընտրությունները, նույնիսկ դժվարին հանգամանքներում:

Ուշադիր կարդացեք այս փաստաթուղթը, որպեսզի կարողանաք հասկանալ և հետևել մեր քաղաքականությանը և արժեքներին, երբ գալիս եք աշխատանքի և սկսում համագործակցություն՝ որպես Mountain-ցի:

Հիշի՛ր, վստահությունը սկսվում է քեզանից: Բարձրաձայնի՛ր

Մենք երբեք չպետք է անտարբերություն դրսևորենք Կանոնակարգի և դրա բովանդակության վերաբերյալ: Ուստի, եթե զգնում եք, որ ինչ-որ մեկը չի համապատասխանում մեր Կանոնակարգին կամ արժեքներին, հայտնեք այդ մասին: Եվ իմացեք, որ մենք երբեք չենք հանդուրժի վրեժխնդրությունը ցանկացած մեկի նկատմամբ, ով մտահոգություն է հայտնում:

Մեր հաջողությունը և հեղինակությունը հիմնված է մեր Կանոնակարգի պահանջները կատարելու վրա: Տնօրենների խորհրդի և մեր գործադիր ղեկավարության անունից շնորհակալություն եմ հայտնում ձեզ՝ մեր Արժեքներն իրականացնելու և Պաշտպանելու այն, ինչ կարևոր է:

Հարգանքով,

Բիլ Մինի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր տնօրեն Բիլ Մինիի ուղերձը
Մեր արժեքները

10 ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ, ՊԱՇՏՊԱՆԵԼ ԿԱՐԵՎՈՐԸ

Բարձրաձայնել
Մեր Կանոնակարգային պարտականությունները

18 ԳՈՐԾԵԼ ԱՋՆՎՈՒԹՅԱՄԲ

Մրցել անզիջում, բայց արդար
Հավաքել մրցակցային տեղեկատվություն
Խուսափել շահերի բախումներից
Կառավարել և հրապարակել ճշգրիտ գրառումներ
Համապատասխանություն միջազգային պատժամիջոցների և առևտրային կանոնակարգերի պահանջներին
Կանխարգելել կաշառակերությունը և կոռուպցիան
Թույլատրելի նվերների հանձնում և հյուրընկալություն

36 ՄԵՐ ԹԻՄԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ

Mountain-ցի գործընկերների նկատմամբ հարգանք և պաշտպանություն
Ներառականության և բազմազանության արժևորում
Շուրջօրյա անվտանգության ապահովում
Տեխնոլոգիաների և տեղեկատվական համակարգերի անվտանգ և պատասխանատու օգտագործում
Մեր գաղտնի տեղեկատվության և մտավոր սեփականության պահպանում
Մեր ամենաարժեքավոր ակտիվների պաշտպանում
Սոցիալական ցանցերի օգտագործում արդյունավետ և պատասխանատու ձևով
Ազնիվ վաճառք և շուկայավարում

56 ԱՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՄՈՏ և ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Գաղտնիության պահպանում
Շրջակա միջավայրի պահպանում և աջակցություն մեր համայնքներին
Մարդու իրավունքների հարգում և ժամանակակից ստրկության կանխում
Ճիշտ գործընկերների ընտրություն
Մեր ապրանքանիշի և հեղինակության պահպանում
Քաղաքականությունը աշխատավայրում և դրսում
Ինսայդերական գործարքների արգելում

74 IRON MOUNTAIN-Ի ԷԹԻԿԱՅԻ ԹԵԺ ԳԻԾ

Iron Mountain-ի էթիկայի թեժ գիծ

ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

սահմանում են, թե ով ենք մենք: Դրանք առաջնորդում են մեր՝ որպես Mountain-ցիների գործողությունները:

ՄԵՐ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ,

որպես էթիկայի չափանիշներին հետևող ընկերություն, օգնում է մեզ աշխատանքի ընդունել և զարգացնել լավագույններին, վստահություն ներշնչել մեր շահառուների մոտ և դռներ բացել դեպի նոր շուկաներ:

Թեև Կանոնակարգն անդրադառնում է բազմաթիվ խնդիրների, որոնց մենք կարող ենք բախվել որպես Mountain-ցի, ոչ մի փաստաթուղթ չի կարող ներառել ամենը: Եթե պատասխանը Կանոնակարգում չկա կամ ցանկանում եք լրացուցիչ տեղեկություններ Կանոնակարգի ցանկացած թեմայի վերաբերյալ, կարող եք.

- Դիմել ձեր ղեկավարին
- Կարդալ համապատասխան քաղաքականությունը
- Դիմել Գաղտնիության պաշտպանության և պահանջների պահպանման բաժին

ԳՈՐԾԵԼ ԱՋՆՎՈՒԹՅԱՄԲ
Մենք բաց ենք և ազնիվ և ամեն օր իրագործում ենք մեր արժեքները:

ՍԵՓԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ և ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ
Մենք պաշտպանում ենք ինքներս մեզ և միմյանց վնասից, և ապահովում ենք մեր հաճախորդների գույքը, ինչպես մեր սեփականը:

ԱՐԺԵՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Մենք անընդհատ ուղիներ ենք որոնում մեր հաճախորդներին ավելի լավ սպասարկելու և նրանց բիզնեսը բարելավելու համար:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՆՁՆՈՒՄ
Մենք անձնական պատասխանատվություն ենք ստանձնում մեր թիմերի, մեր հաճախորդների և մեր ընկերության հաջողության համար:

ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ԹԻՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ
Մենք բացահայտում և արժևորում ենք միմյանց յուրահատուկ գաղափարներն ու տեսակետները՝ ավելի լավ արդյունքներ ստանալու համար:

ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

ՊԱՇՏՊԱՆԵԼ ԿԱՐԵՒՈՐԸ

IRON MOUN-TAIN-ՈՒՄ ԲՈԼՈՐՆ ՈՒՆԵՆ ՁԱՅՆԻ ԻՐԱՎՈՒՆՔ

14 Բարձրաձայնել

16 Մեր Կանոնակարգային պարտականությունները

ԲԱՐՁՐԱՁԱՅՆԵԼ

Եթե վստահ չեք որևէ իրավիճակում կամ կարծում եք, որ ինչ-որ մեկը սխալ բան է անում, ապա բարձրաձայնելը՝ որպես Mountain-ցի, ձեր պարտականությունն է:

Մտահոգություն արտահայտելու դեպքում ընկերությունը կարող է ուսումնասիրել և լուծել խնդիրը, որպեսզի այն այլևս չկրկնվի:

Ինչ է էթիկայի թեժ գիծը

Iron Mountain-ի էթիկայի թեժ գիծը հնարավորություն է տալիս գաղտնի և անանուն կերպով (եթե դա անելը օրինական է) բարձրաձայնել ձեր մտահոգությունները: Հաղորդումներն ընդունվում են անկախ ընկերության կողմից և ուղարկվում են Iron Mountain՝ ուսումնասիրելու, քննելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար:

էթիկայի թեժ գիծը մշտապես հասանելի է: Ձեր տեղական հեռախոսահամարն իմանալու համար այցելեք **www.IMEthicsLine.com** կամ գտեք այն Կանոնակարգի շապիկում:

ԿԱՐՈՂ ԵՔ ՆԱԵՎ ԴԻՄԵԼ.

– Ձեր անմիջական ղեկավարին
– Կադրերի բաժին
– Global Privacy and Compliance
– Global Safety, Risk, and Security
– Iron Mountain's General Counsel



Ինչ է լինում, երբ հաղորդում եք անբարեխիղճ վարքի մասին:

Անբարեխիղճ վարքի մասին բոլոր հաղորդումները ուսումնասիրվում են անհապաղ, մանրակրկիտ և օբյեկտիվ: Ձեր զեկուցագիրը կպահպանվի առավելագույն չափով գաղտնի:

Եթե հետաքննությունը վերաբերում է հնարավոր հանցավոր գործունեության, մենք կներգրավենք բոլոր համապատասխան իրավապահ մարմիններին և լիովին կաջակցենք իրավական գործընթացին:

Հետաքննությունն ավարտելուց հետո մենք կձեռնարկենք համապատասխան կարգապահական միջոցներ և կկատարենք անհրաժեշտ փոփոխություններ՝ ապահովելու համար, որ դա չկրկնվի: Մենք նաև կտեղեկացնենք ձեզ զեկուցագրի հետևանքների մասին:

Բարձրաձայնելը Iron Mountain-ում անվտանգ է

Iron Mountain-ում չեն հանդուրժում վրեժխնդրությունը: Այն անբարեխիղճ վարքի վատագույն դրսևորումներից է:

Վրեժխնդրությունը կարող է ունենալ տարբեր ձևեր, այդ թվում՝

- Հետամտում կամ սպառնալիքներ
- Պաշտոնի իջեցում կամ աշխատանքից հեռացում
- Արտաժամյա աշխատանքի ժամերի կամ հնարավորությունների կրճատում
- Չհիմնավորված բացասական կարծիքներ ձեր աշխատանքի մասին
- Ղեկավարության կողմից անհիմն քննադատություն կամ գործընկերների կողմից անտեսում

Բարեխղճորեն մտահոգություն հայտնած անձի նկատմամբ հետապնդման ցանկացած ձև կունենա լուրջ հետևանքներ՝ ընդհուպ մինչև աշխատանքից ազատելը:

Թեև ընկերությունը կհսկի վրեժխնդրության ցանկացած դրսևորումները և կփորձի կանխել դրանք, հիշեք, որ նկատելու դեպքում յուրաքանչյուր Mountain-ցու պարտքն է զեկուցել դրա մասին:

ՄԵՐ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ովքե՞ր պետք է հետևեն Կանոնակարգին

Iron Mountain-ի համար բիզնես վարող յուրաքանչյուր անձ պետք է հետևի Կանոնակարգին, այդ թվում՝ աշխատակազմը, պատասխանատու աշխատակիցները, գործակալները և Տնօրենների խորհրդի անդամները: Կանոնակարգը տարածվում է ամբողջ աշխարհում Iron Mountain-ի բիզնեսի միավորների, իրավաբանական անձանց, վերահսկվող համատեղ ձեռնարկությունների, դուստր ձեռնարկությունների և գործընկերությունների վրա: Բացառություններ չկան: Այն դեպքերում, երբ քաղաքականությունը կամ տեղական չափանիշը տարբերվում է Կանոնակարգից, կիրառվում է ավելի խիստ չափանիշը:



Մեզ հետ կամ մեր անունից աշխատող բիզնես գործընկերները, ներառյալ մատակարարները, վաճառողները, կապալառուները, խորհրդատուները, ժամանակավոր աշխատողները, պայմանական աշխատողները և այլք, պետք է համապատասխանեն մեր Մատակարարի վարքականոններում սահմանված սկզբունքներին և պահպանեն գործարար վարքի նույն բարձր չափանիշները:

Բոլոր Mountain-ցիները, մեր ընկերության յուրաքանչյուր մակարդակում, պարտավոր են.

- **Իրազործել** մեր արժեքները
- **Հետևել** մեր Կանոնակարգին, քաղաքականությանը, ընթացակարգերին և օրենքին
- **Բարձրաձայնել,**եթե անբարեխիղճ վարք են նկատել
- **Ավարտել** համապատասխանության դասընթացները ժամանակին
- **Օգնել մեզ,** երբ հետաքննում ենք անբարեխիղճ վարքը
- **Հարցնել,** եթե չգիտեք թե ինչ անել

Մենեջերներն ու ղեկավարները լրացուցիչ պարտականություններ ունեն հետևյալի համար.

- **Քննարկել** Կանոնակարգը և մեր արժեքները թիմի հանդիպումների և մարդկանց գործունեության ստուգումների ընթացքում
- **Պարգևատրել** էթիկական առաջնորդների գործողությունները
- **Խոսել** ձեր թիմերի հետ այն մասին, թե ինչպես են այդ գործողությունները կապվում մեր հաջողության հետ
- **Ապահովել,** որ հարցեր տալիս և մտահոգություն արտահայտելիս մարդիկ լինեն անկաշկանդ
- **Ցույց տալ** աշխատակիցներին այն ձևերը, որոնցով նրանք կարող են հաղորդել անբարեխիղճ վարքի մասին
- **Ընդգծել,** որ մենք չենք հանդուրժի վրեժխնդրությունը
- **Ապահովել,** որ մեր գործընկերները (օրինակ՝ խորհրդատուները կամ ոչ մշտական աշխատողները) նույնպես գործեն մեր արժեքներին համապատասխան

Բացառություններ

Հազվադեպ դեպքերում բացառության թույլտվություն կարող է տրվել մեր Իրավաբանական տնօրենի կողմից: Նման թույլտվությունը մանրակրկիտ ձևով կդիտարկվի մեր արժեքների լույսի ներքո և կհրապարակվի օրենքով սահմանված կարգով:

ԳՈՐԾԵԼ ԱՋՆՎՈՒԹՅԱՄԲ

IRON MOUNTAIN-Ը ՀԱՂԹՈՒՄ Է ԱՐԺԱՆԻՔՆԵՐԻ ՇՆՈՐՀԻՎ

22 Մրցել անզիջում, բայց արդար

24 Հավաքել մրցակցային տեղեկատվություն

26 Խուսափել շահերի բախումներից

28 Կառավարել և հրապարակել ճշգրիտ գրառումներ

30 Համապատասխանություն միջազգային պատժամիջոցների և առևտրային կանոնակարգերի պահանջներին

32 Կանխարգելել կաշառակերությունը և կոռուպցիան

34 Թույլատրելի նվերների հանձնում և հյուրընկալություն

ՄՐՑԵԼ ԱՆՁԻՁՈՒՄ, ԲԱՑՑ ԱՐԴԱՐ

Iron Mountain-ը համոզված է, որ ազատ և մրցակցային շուկան մեր՝ հաջողության հասնելու լավագույն ճանապարհն է: Մենք գիտակցում ենք, որ նույնիսկ թվացյալ անարդարությունը կամ խաբեությունը մեր մրցակցային պրակտիկայում կարող են ուղղակիորեն խոչընդոտել հաջողության հասնելու մեր հնարավորություններին: Ապահովելով արժեք և մատուցելով ոլորտում լավագույն ծառայությունները՝ մենք գերազանցում ենք մրցակիցներին և երկարաժամկետ վստահության կապ ենք ստեղծում մեր հաճախորդների հետ:

Ինչպես ենք մենք հաշվետու

Արդար մրցակցության մասին օրենքները տարբեր երկրներում տարբեր են, բայց այս սկզբունքները հաստատուն են.

- Խուսափեք մրցակիցների հետ պաշտոնական կամ ոչ ֆորմալ պայմանավորվածություններից հետևյալի վերաբերյալ՝
  - Ծառայության համար որոշակի գնի գանձում (գնի նախորոշում)
  - Մրցութային գործընթացի վրա ներազդում (հայտատուի հետ անօրինական պայմանավորվածություն)
  - Շուկաների բաժանում ըստ աշխարհագրության կամ հաճախորդների (շուկայի տրամադրում)
- Խուսափեք մեր մրցակիցների կամ նրանց ծառայությունների վերաբերյալ նսեմացուցիչ դիտողություններից
- Մեր ծառայությունների վերաբերյալ արեք միայն անկեղծ, ճշգրիտ և ոչ չափազանցված պնդումներ
- Երբեք անպատշաճ կերպով մի միջամտեք մեր հաճախորդների գործող բիզնես պայմանագրերին

Ինչ անել, երբ մրցակիցը անբարեխիղճ պայմանավորվածություն է առաջարկում.

- **Բարձրաձայնեք:** Ձեր մտահոգությունը հնչեցրեք և խնդրեք, որ այդ թեմայի քննարկումը դադարեցվի:
- **Եթե քննարկումը շարունակվում է, հեռացեք կամ անջատեք հեռախոսը:** Անմիջապես դադարեցրեք հանդիպումը կամ ավարտեք զանգը:
- **Գրանցեք ձեր առարկությունն ու հեռացեք:** Գրառում կատարեք ինքներդ ձեզ համար: Ապահովեք, որ զանգի կամ հանդիպման ցանկացած արձանագրություն արտացոլում է ձեր մերժումը:
- **Զեկուցեք Գաղտնիության պաշտպանության և պահանջների պահպանման բաժին:** Անմիջապես տեղեկացրեք ձեր ղեկավարին և Գաղտնիության պաշտպանության և պահանջների պահպանման բաժնի որևէ աշխատակցին:

Իմանալ ավելին.

Հակամենաշնորհային կամ մրցակցության հետ կապված հարցեր ունենալու դեպքում դիմեք ձեր ղեկավարին կամ Գաղտնիության պաշտպանության և պահանջների պահպանման բաժին և կարդացեք մեր Հակամենաշնորհային և արդար մրցակցության քաղաքականությունը: Կարդացեք նաև Կանոնակարգի հետևյալ բաժինները. «Մրցակցային տեղեկատվության հավաքում» և «Ազնիվ վաճառք և շուկայավարում»:

ՀԱՎԱՔԵԼ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ոլորտային զարգացումների մոնիտորինգը և մրցակցային դաշտի պատկերացումը օգնում է մեզ կատարելագործել մեր լուծումները և ավելի արդյունավետ մրցակցել: Սակայն որևէ մրցակցային տեղեկատվություն չպետք է վտանգի Iron Mountain-ի հեղինակությունը կամ **Ազնվորեն գործելու** պարտավորությունն իրականացնելու մեր կարողությունը:

Ինչպես ենք մենք հաշվետու

Մրցակցային դաշտի վերաբերյալ տեղեկատվություն հավաքելիս, ստանալիս և օգտագործելիս մենք զգույշ և ազնիվ ենք:

ԴԱ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է, ՈՐ ՄԵՆՔ.

- Ապավինում ենք միայն տեղեկատվության համապատասխան աղբյուրներին (տե՛ս ստորև բերված աղյուսակը)
- Երբեք սխալ չենք ներկայացնում մեր ինքնությունը կամ գործատուին
- Չենք վարձում մրցակիցների աշխատողներին՝ գաղտնի տեղեկատվություն ստանալու համար կամ դրդում նրանց հայտնել գաղտնի տեղեկատվություն, երբ նրանք դառնում են մեր աշխատակիցը
- Միշտ կնքում ենք պայմանագիր և հորդորում բոլոր խորհրդատուներին և գործակալներին պահպանել Iron Mountain-ի չափանիշներն ու քաղաքականությունը

Մրցակցային տեղեկատվության «ընդունելի աղբյուրներն» են.

- Պետական կայքերը և սոցիալական ցանցերը
- Նորությունների հոդվածները և հարցազրույցները
- Հանրությանը հասանելի ֆինանսական հաշվետվությունները և փաստաթղթերը
- Հաճախորդների հետ հետադարձ կապը
- Առցանց արձագանքները
- Մասնագիտական և առևտրային ամսագրերը
- Առևտրի ցուցահանդեսներում և համաժողովներում տարածված տեղեկատվությունը
- Կառավարության արձանագրությունները

Ստորև նշվածից որևէ մեկի դեպքում խորհրդակցեք Գաղտնիության պաշտպանության և պահանջների պահպանման բաժնի հետ.

- «Հայտնաբերել եք» Iron Mountain-ին սխալմամբ ուղարկված փաստաթղթեր, օրինակ՝ էլեկտրոնային նամակներ
- Մրցակցի գաղտնի փաստաթղթեր ցանկացած աղբյուրից, ներառյալ.
    - Պայմանագրեր կամ գնագոյացման պլաններ
    - Ռազմավարական փաստաթղթեր
    - Հայտեր կամ այլ հաճախորդներին առաջարկներ
    - Ցանկացած փաստաթուղթ՝ «Գաղտնի», «Ծառայողական» կամ «Մասնավոր սեփականություն» մակնշմամբ
- Տվյալների խախտման կամ այլ հանցավոր գործունեության միջոցով ի հայտ եկած տեղեկատվություն

« Մենք չենք կարող անտեսել պատասխանատվությունը միյսակցային տեղեկատվության անբարեխիղճ կամ անօրինական ձեռքբերման համար»:

Iron Mountain-ի
Մրցակցային տեղեկատվության ուղենիշներ

Իմանալ ավելին.

Եթե ունեք հարցեր, թե ինչպես պատշաճ կերպով հավաքել կամ օգտագործել մրցակցային տեղեկատվությունը, դիմեք ձեր ղեկավարին և կարդացեք մեր Հակամենաշնորհային և արդար մրցակցության քաղաքականությունը:

ԽՈՒՍԱՓԵԼ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄՆԵՐԻՑ

Ներառականության և թիմային աշխատանքի խրախուսում. յուրաքանչյուր Mountain-ցու պարտականությունն է թույլ չտալ, որ անձնական շահերն ու հարաբերությունները միջամտեն մեր բիզնես որոշումներին: Նույնիսկ թվացյալ շահերի բախումը կարող է կասկածի տակ դնել մեր ազնվությունը, վնասել մեր թիմերին և խոչընդոտել մեր՝ խոստումները կատարելու ունակությանը:

Այդ պատճառով մենք խուսափում ենք կամ բացահայտում այն իրավիճակները, որոնք կարող են խոչընդոտել մեր դատողությանը կամ դրդել մեզ գործել որևէ կերպ, որը չի բխում Iron Mountain-ի լավագույն շահերից:

Ինչպես ենք մենք հաշվետու

Մասնագիտական գործունեության ընթացքում մենք հավատարիմ ենք մեր ընկերությանը:

Դա նշանակում է, որ մենք.

– Պահպանում ենք զգոնությունը և փորձում ենք խուսափել իրավիճակներից, երբ կարող են բախումներ առաջանալ
– Անմիջապես հաղորդում ենք բոլոր բախումների մասին (լինեն դրանք իրական, հնարավոր կամ ընկալվող) այնպես, ինչպես պահանջում է մեր քաղաքականությունը
– Միջոցներ ենք ձեռնարկում բախումների ազդեցությունը մեղմելու համար, եթե դրանցից հնարավոր չէ խուսափել

Շահերի բախումը կարող է ունենալ տարբեր ձևեր –

Մեր Շահերի բախման քաղաքականությունը ներկայացնում է, թե ինչպես կարգավորել դրանք հետևյալ ոլորտներում.

1. Մրցակիցների մոտ աշխատանքի համատեղում, կամ երբ այդ նպատակով ծախսված ժամանակը խոչընդոտում է Iron Mountain-ում ձեր պարտականությունների կատարմանը
2. Հաղորդման միևնույն շղթայում գտնվող աշխատակիցների կամ մեր բիզնես գործընկերներից մեկի հետ անձնական հարաբերություններ
3. Նշանակալից ֆինանսական շահեր (5% և ավելի) կազմակերպությունում, որի հետ Iron Mountain-ը բիզնես է վարում
4. Ծառայություն առևտրային ընկերությունների տնօրենների խորհրդում, կամ երբ այդ նպատակով ծախսված ժամանակը խոչընդոտում է Iron Mountain-ում ձեր պարտականությունների կատարմանը

Իմանալ ավելին.

Շահերի բախման կամ դրա բացահայտման վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում տե՛ս մեր Շահերի բախման քաղաքականությունը:

ԿԱՌԱՎԱՐԵԼ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿԵԼ ՃՇԳՐԻՏ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Մեր հաշվապահական մատյանների, գրառումների և ֆինանսական հաշվետվությունների ազնվությունը կարևոր նշանակություն ունի մեր հեղինակության և մեր շահառուների վստահության պահպանման համար: Այդ գրառումների պատշաճ հրապարակումը նաև օգնում է վստահություն ներշնչել մեր հաճախորդներին և ներդրողներին: Այդ պատճառով մենք պետք է ակտիվորեն կառավարենք բոլոր բիզնես գրառումները և ձեռնարկենք անհրաժեշտ քայլեր՝ դրանց ճշմարտացիության և թափանցիկության ապահովման համար:

Ինչպես ենք մենք հաշվետու

Որպես հանրային ընկերություն՝ մեզնից պահանջվում է պահպանել և հրապարակել ճշգրիտ գրառումներ: Բայց դրանից բացի, Mountain-ցիների համար դա **Պատասխանատվություն ստանձնելու** և **Ազնիվ գործելու** կարևոր միջոց է:

ԴԱ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է, ՈՐ ՄԵՆՔ.

- Սերտորեն հետևում ենք բոլոր ֆինանսական վերահսկման և գրառումների կառավարման կանոններին
- Աուդիտորներին և կարգավորողներին տրամադրում ենք ճշգրիտ, ամբողջական և ժամանակին գրառումներ
- Երբեք անթույլատրելի կերպով չենք փոփոխում եկամտի կամ ծախսերի տվյալները՝ բյուջետային նպատակին հասնելու համար
- Ուշադիր ստուգում ենք անորոշ կամ անապահով գործարքները, որոնք կարող են վկայել խարդախության կամ փողերի լվացման մասին
- Պահպանում ենք գրառումները միայն այնքան ժամանակ, որքան պահանջվում է Գրառումների պահպանման ընդհանուր ժամանակացույցում

Iron Mountain-ն առաջատար է

Մենք ցանկացած ընկերությունից ավելի լավ ենք հասկանում, թե ինչպես արդյունավետ գրառումները և տեղեկատվության կառավարման ծրագիրը կարող են բարձրացնել արդյունավետությունը, նվազեցնել ռիսկերը և նպաստել ամբողջ կազմակերպության արժեքների բարձրացմանը:

Կատարեք ձեր ներդրումը՝
- Նույնականացնելով և դասակարգելով բոլոր պաշտոնական բիզնես գրառումները՝ անկախ ձևաչափից
- Վարելով անվտանգ ու կազմակերպված գրառումներ, որպեսզի դրանք հեշտությամբ և հուսալիորեն հնարավոր լինի ստանալ
- Անվտանգ կերպով ոչնչացնելով թղթային գրառումները՝ օգտագործելով մեր անվտանգ մանրացման արկղերը
- Խստորեն հետևելով պահպանման բոլոր իրավական հրահանգներին

«Գրառումը» կարող է լինել թղթային և էլեկտրոնային, և ներառել՝
- Էլ.նամակներ, նամակներ, ձայնային հաղորդագրություններ և զրույցի (չաթ) տեղեկամատյաններ
- Պատկերներ և տեսանյութեր
- Աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրեր
- Ծախսերի հաշվետվություններ
- Գնման պատվերներ և հաշիվ-ապրանքագրեր
- Պայմանագրեր
- Բյուջեի կանխատեսումներ
- Կարգավորող փաստաթղթեր

«Արդյունավետորեն գործադրելով գրառումների վարման հետևողական և հաշվեկշռ գործելակերպեր՝ մենք բարձրացնում ենք արդյունավետությունը, նվազեցնում ռիսկը և նպաստում արժեքների կարևորմանը կազմակերպության ամբողջ կառույցում»:

Iron Mountain-ի գրառումների և տեղեկատվության կառավարման քաղաքականություն

Իմանալ ավելին.

Ֆինանսական գրառումների վարման կամ մեր կորպորատիվ գրառումների և տեղեկատվության կառավարման ծրագրի վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում դիմեք ձեր ղեկավարին և ուսումնասիրեք Գրառումների և տեղեկատվության կառավարման մեր քաղաքականությունը:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ

Մենք աշխատում ենք շատ երկրներում, որոնք վերահսկում են զգայուն սարքավորումների և տվյալների (օրինակ, համակարգչային սարքավորումների և կոդավորման տեխնոլոգիաների) ներմուծումն ու արտահանումը: Կան նաև որոշակի խմբերի, անհատների կամ երկրների հետ բիզնես վարելու ընդհանուր սահմանափակումներ: Միջազգային պատժամիջոցների և առևտրային կանոնների խիստ պահպանումը վճռորոշ նշանակություն ունի միջազգային մակարդակով բիզնես վարելու մեր ունակության պահպանման համար և մեր **Անվտանգության և ապահովության** արժեքի իրականացման կարևոր միջոց է:

Ինչպես ենք մենք հաշվետու

Միջազգային լայն մասշտաբով առևտրով զբաղվելը կարող է ռիսկային լինել:

Այդ իսկ պատճառով մենք՝

- Խուսափում ենք առևտրից կամ գործընկերությունից այն անհատների կամ կազմակերպությունների հետ, որոնք չեն անցել պետական պատժամիջոցների կամ սև ցուցակներում ընդգրկված լինելու ստուգում
- Սահմանափակում ենք չարտոնված աշխատողների մուտք գործելը հաճախորդի տեղեկատվություն, որը կարող է վերահսկվել որոշակի պայմանագրերի և կանոնակարգերի համաձայն
- Աշխատում ենք մեր հաճախորդների և Գաղտնիության պաշտպանության և պահանջների պահպանման բաժնի հետ՝ որպեսզի պատշաճ կերպով լիազորված լինենք սահմանափակված տվյալներն արտերկիր փոխանցելիս
- Հետևում ենք մեր մատակարարման շղթայի բիզնես գործընկերներին՝ համոզվելու համար, որ նրանք նույնպես պատշաճ ձևով հետևում են կանոններին
- Խորհրդակցում ենք Գաղտնիության պաշտպանության և պահանջների պահպանման բաժնի հետ, եթե բաժանմունք ենք բացում նոր երկրում կամ մշակում ենք նոր սարքավորումներ կամ տեխնոլոգիաներ, որոնք կարող են արտահանվել

Իմանալ ավելին.

Միջազգային պատժամիջոցների կամ առևտրային կարգավորումների վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում դիմեք Գաղտնիության պաշտպանության և պահանջների պահպանման բաժին և կարդացեք մեր Միջազգային պատժամիջոցների և առևտրի քաղաքականությունը:

ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼ ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՈՌՈՒՊՑԻԱՆ

Կոռուպցիան և կաշառակերությունը վնասում են համայնքներին, վտանգում են մեր հեղինակությունը և կարող են հանգեցնել զգալի տուգանքների և ազատազրկման: Անկախ տեղական սովորույթից կամ այլ ընկերությունների վարքից՝ Iron Mountain-ը (և մեր բիզնես գործընկերները) խուսափում են անպատշաճ գործելակերպի նույնիսկ թվացյալ հնարավորությունից՝ հատկապես պետական պաշտոնյաների հետ գործ ունենալիս:

Ինչպես ենք մենք հաշվետու

Iron Mountain-ը միշտ կնախընտրի կորցնել բիզնեսը, քան կաշառք տալ՝ այն շահելու համար:

ԴԱ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է, ՈՐ ՄԵՆՔ.

- Երբեք չենք առաջարկում, խոստանում կամ տրամադրում արժեքավոր որևէ բան՝ բիզնես առաջարկ, անազնիվ օգուտ կամ առավելություն ստանալու համար
- Ընտրում (և վերահսկում) ենք երրորդ կողմերի, ովքեր կիսում են կոռուպցիայի և կաշառակերության դեմ պայքարելու մեր հանձնառությունը
- Վարում ենք հաշվապահական մատյաններ և կատարում ենք գրառումներ, որոնք ամբողջությամբ և ճշգրիտ ներկայացնում են բոլոր վճարումները և ծախսերը

Ինչ է կաշառքը:

Կաշառքը արժեքավոր որևէ բան առաջարկել է՝ ազդելու, թե ինչպես ինչ-որ մեկը կառավարությունում կամ մասնավոր հատվածում իրականացնում է իր պարտականությունները կամ անպատշաճ ձևով բիզնես առավելություն ստանալու համար: Նույնիսկ եթե կաշառքը չի ընդունվում, այն անօրինական է և չի համապատասխանում Iron Mountain-ի քաղաքականությանը:

Կաշառքը կարող է լինել ցանկացած արժեք, ոչ միայն կանխիկ գումար: Բարեգործական նվիրատվությունը, զեղչը կամ նույնիսկ աշխատանքի կամ պրակտիկայի առաջարկը կարող է համարվել կաշառք:

Համապատասխանություն բոլոր կիրառելի օրենքներին

Մենք համաշխարհային ընկերություն ենք և խստորեն հետևում ենք կաշառակերության և կոռուպցիայի դեմ պայքարի օրենքներին յուրաքանչյուր երկրում, որտեղ գործում ենք՝ լինի դա դաշնային, նահանգային կամ տեղական մակարդակում: Դրանց թվում են ԱՄՆ-ի Արտասահմանում կոռուպցիոն գործելակերպերի մասին օրենքը, Մեծ Բրիտանիայի Կաշառքի մասին օրենքը և Բրազիլիայի Մաքուր ընկերությունների մասին օրենքը:

Իմանալ ավելին.

Կաշառակերության կամ կոռուպցիայի հետ կապված խնդիրների վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում դիմեք ձեր ղեկավարին կամ Գաղտնիության պաշտպանության և պահանջների պահպանման բաժին և կարդացեք մեր Կաշառակերության և կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականությունը:

ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՆՎԵՐՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ ԵՎ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Iron Mountain-ի հաջողության համար չափազանց կարևոր է հաճախորդների և բիզնես գործընկերների հետ ամուր հարաբերությունների հաստատումը: Նվերներ տալը կարող է երախտագիտություն հայտնելու ընդունելի ձև լինել, իսկ հյուրընկալությունը կարող է օգնել մեզ քննարկել բիզնեսի թեմաները և ցուցադրել մեր ծառայությունները: Թեև նվերներն ու հյուրընկալությունը կարող են վստահություն ստեղծելու օրինական ձևեր լինել, դրանք երբեք չեն կարող օգտագործվել գործարար որոշումների վրա անպատշաճ կերպով ազդելու համար: Այդ պատճառով դրանք պետք է լինեն ողջամիտ և համապատասխանեն ընկերության քաղաքականությանը:

Ինչպես ենք մենք հաշվետու

Թեև նվերների և հյուրընկալության վերաբերյալ տեղական սովորույթները տարբեր են, մենք միշտ հավատարիմ ենք մեր արժեքներին և հաշվետու ենք մեր Կանոնակարգին:

ԴԱ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է, ՈՐ ՄԵՐ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԲՈԼՈՐ ՆՎԵՐՆԵՐՆ ՈՒ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԵՆ.

- Օրինական նպատակի համար (օրինակ՝ նպաստեն ծառայության ցուցադրմանը)
- Հաստատված մեր քաղաքականության ներքո (տե՛ս Հաստատման մակարդակի աղյուսակը) և թույլատրվեն ստացողի քաղաքականությամբ
- Համապատասխանեն տեղական օրենսդրության պահանջներին
- Ողջամիտ արժեքի, և չլինեն կանխիկի կամ նվեր քարտերի տեսքով
- Պատշաճ այդ հանգամանքներում (չդնեն անհարմար դրության մեջ և չվնասեն մեր հեղինակությունը)
- Ճշգրիտ գրանցված և հաշվառված մեր հաշվապահական մատյաններում և գրառումներում

Բացի վերը թվարկված գործոններից, նվերներն ու հյուրընկալությունը, որոնք մենք ընդունում ենք, պետք է լինեն.

- Չպարտադրված
- Մերժվեն, եթե դրանք առաջարկվում են վաճառողի կողմից գնումների մասին որոշման կայացման պահին
- Չգերազանցեն 100 ԱՄՆ դոլարը՝ նվերների և 250 ԱՄՆ դոլարը՝ հյուրընկալության համար, բացառությամբ մեր Քաղաքականությամբ նախատեսված դեպքերի:

Հաստատման մակարդակի աղյուսակ. Նվերների և հյուրընկալության առաջարկ

ՆՎԵՐՆԵՐԻ (Տարեկան չորսից ոչ ավել՝ մեկ ստացողի հաշվով)	ՀԱՆՁՆՈՒՄ ԵՒ (Երախտագիտության արտահայտություն, օրինակ՝ ծաղիկներ կամ շոկոլադ)	ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅՈՒՆ (Iron Mountain-ի ծառայությունների ցուցադրման հետ կապված ուղևորություն և զիշերակաց)
Պետական պաշտոնյային	Միշտ դիմեք Գաղտնիության պաշտպանության և պահանջների պահպանման բաժին՝ հաստատման համար:	Միշտ դիմեք Գաղտնիության պաշտպանության և պահանջների պահպանման բաժին՝ հաստատման համար:
Ներկա կամ հնարավոր հաճախորդին	100 ԱՄՆ դոլարից բարձր լինելու դեպքում դիմեք Գաղտնիության պաշտպանության և պահանջների պահպանման բաժին՝ հաստատման համար	250 ԱՄՆ դոլարից բարձր լինելու դեպքում դիմեք Գաղտնիության պաշտպանության և պահանջների պահպանման բաժին՝ հաստատման համար
Mountain-ցի գործընկերոջը	Պետք է լինի ողջամիտ չափի և, ընդհանուր առմամբ, չի կարող ներկայացվել փոխհատուցման	Պետք է լինի ողջամիտ չափի և, ընդհանուր առմամբ, չի կարող ներկայացվել փոխհատուցման

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Iron Mountain-ը հպարտ է աջակցելու բազմաթիվ բարեգործական նպատակների մեր համայնքներում:

Iron Mountain-ի անունից արված բոլոր բարեգործական ներդրումները՝ լինի դա նվիրատվություն, թե կամավորություն, պետք է ներկայացվեն Նվերների և հյուրընկալության առցանց պորտալ:

Լրացուցիչ կանոններ պետական պաշտոնյաների համար

Պետական պաշտոնյաների հետ գործ ունենալը պահանջում է լրացուցիչ զգոնություն: Այն, ինչ կարող է թույլատրելի լինել առևտրային ընկերությունների համար, անօրինական կարող է լինել կառավարությունների հետ գործ ունենալիս: Նախքան որևէ պետական պաշտոնյայի արժեքավոր որևէ բան տրամադրելը միշտ ստացեք Գաղտնիության պաշտպանության և պահանջների պահպանման բաժնի հաստատումը:

«Պետական պաշտոնյա» հասկացությունը լայն կատեգորիա է, որը ներառում է.

- Բոլոր ընտրված և նշանակված պետական պաշտոնյաներին, նույնիսկ եթե նրանք կես դրույքով են աշխատում
- Պետական մարմինների աշխատակիցներին
- Պետական ձեռնարկությունների և կազմակերպությունների, այդ թվում՝ բանկերի, համալսարանների կամ հիվանդանոցների աշխատակիցներին
- Քաղաքական պաշտոնների թեկնածուներին

Իմանալ ավելին.

Նվերների և հյուրընկալության վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում դիմեք ձեր ղեկավարին կամ Գաղտնիության պաշտպանության և պահանջների պահպանման բաժին և կարդացեք մեր Նվերների, հյուրընկալության և բարեգործական վճարների քաղաքականությունը:

ՄԵՐ ԹԻՄԵՐԻ ՀՋՈՐԱՑՈՒՄ

ՄԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ ՄԵՐ ԱՄԵՆԱՄԵԾ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆ ԵՆ

40 Mountain-ցի գործընկերների նկատմամբ հարգանք և պաշտպանություն

42 Ներառականության և բազմազանության արժևորում

44 Շուրջօրյա անվտանգության ապահովում

46 Տեխնոլոգիաների և տեղեկատվական համակարգերի անվտանգ և պատասխանատու օգտագործում

48 Մեր գաղտնի տեղեկատվության և մտավոր սեփականության պահպանում

50 Մեր ամենաարժեքավոր ակտիվների պաշտպանում

52 Սոցիալական ցանցերի օգտագործում արդյունավետ և պատասխանատու ձևով

54 Ազնիվ վաճառք և շուկայավարում

MOUNTAIN-ՑԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետամտումը, խտրականությունն ու սպառնալիքները սոսկ անօրինական և վտանգավոր չեն. դրանք վատթարացնում են բարոյահոգեբանական վիճակը և անվստահություն ու անհարգալից մթնոլորտ ստեղծում, ինչը խանգարում է մեր ներուժի լիարժեք իրացմանը: Ստեղծելով անվտանգ և հարգալից աշխատանքային միջավայր՝ մենք օգնում ենք կառուցել այնպիսի ընկերություն, որտեղ յուրաքանչյուր Mountain-ցի ձայն ունի և ունակ է հաջողության հասնել:

Ինչպես ենք մենք հաշվետու

Մենք հանձնառու ենք ստեղծել այնպիսի աշխատանքային միջավայր, որը զերծ է խտրականությունից, հետամտումից, ահաբեկումից, բռնությունից կամ բռնարարքի այլ ձևերից:

ԴԱ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է, ՈՐ ՄԵՆՔ.

- Միշտ արժանապատիվ և հարգալից ենք վերաբերվում Mountain-ի մեր գործընկերներին:
- Աշխատանքային որոշումները կայացնում ենք՝ ելնելով արժանիքներից, այլ ոչ թե ռասայից, դավանանքից, էթնիկ պատկանելությունից, տարիքից, հաշմանդամությունից, գենդերային ինքնությունից կամ սեռական կողմնորոշումից
- Օգնում ենք կանխել աշխատավայրում բռնությունը՝
  - Կատարելով կենսագրական տվյալների մանրակրկիտ ստուգումներ
  - Զգոն լինելով ագրեսիայի դրսևորումերիի, օրինակ՝ բղավելու կամ իրեր նետելու նկատմամբ
  - Լիցքաթափելով վեճերը և կարգավորելով բախումները
  - Հաղորդելով աշխատավայրում բռնության կամ զենքի սպառնալիքների մասին
  - Ջանգահարելով իրավապահ մարմիններին անմիջական վտանգի սպառնալիքի դեպքում և այնուհետև զեկուցելով այդ մասին ղեկավարին կամ Անվտանգության, ռիսկի և ապահովության բաժին

Հետամտում և սպառնալիք է...

- Այն ինչ **ասում ենք** – օրինակ՝ վիրավորական կատակներ կամ ռասայական հայհոյանքներ
- Այն ինչ **ցուցադրում ենք** – օրինակ՝ գրաֆիտի պատկերում կամ ավտոմեքենայի վրա վիրավորական պիտակների փակցնում
- Այն ինչ **անձամբ ենք անում**– օրինակ՝ անպարկեշտ, սեռական առաջարկ կամ անձի ճանապարհի արգելափակում
- Այն ինչ **անում ենք առցանց** – օրինակ՝ սոցիալական ցանցերում ահաբեկում կամ ստորացուցիչ մեկնաբանություններ անելու համար առցանց պրոֆիլի ստեղծում

Իմանալ ավելին.

Խտրականության, հետամտման կամ աշխատավայրում բռնության վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում դիմեք ձեր ղեկավարին և կարդացեք մեր Խտրականության, հետամտման և բռնության դեմ պայքարի քաղաքականությունը և Անբարեխիղճ վարքի մասին հաղորդելու քաղաքականությունը:



ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՈՐՈՒՄ

Փորձի, կարողությունների և տեսակետների լայն շրջանակ ունեցող անհատների ներգրավումը, զարգացումը և հզորացումը մեր հաջողության գրավականն է: Ընդունելով միմյանց յուրահատուկ հատկություններն ու նախկին փորձառությունը՝ մենք հարստացնում ենք մեր աշխատավայրը, խնդիրները ավելի ստեղծագործորեն լուծում և ավելի լավ ենք հասկանում մեր հաճախորդների կարիքները: Մեր խոսքում և գործողություններում բազմազանությունը ներառելը և հարգելը օգնում է առավելագույնի հասցնել յուրաքանչյուր աշխատողի ներդրումը և մեզ հնարավորություն է տալիս ավելի լավ որոշումներ կայացնել:

Ինչպես ենք մենք հաշվետու

Մենք ստեղծում ենք ներառական և ընդունող աշխատավայր, որտեղ գնահատում ենք և դասեր քաղում մեր տարբերություններից:

ԴԱ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է, ՈՐ ՄԵՆՔ.

- Ակտիվորեն փնտրում ենք այլընտրանքային մոտեցումներ և տեսակետներ
- Հարգանքով լսում ենք յուրաքանչյուրի կարծիքը՝ անկախ նրա զբաղեցրած պաշտոնից
- Հաշվի ենք առնում բազմազանության կարևորությունը թիմեր հավաքագրելիս և կազմավորելիս
- Ազատ կիսում ենք գիտելիքները նրանց հետ, ովքեր կարող են դրանից օգտվել, հատկապես նոր Mountain-ցիների

Իմանալ ավելին.

Ներառականության ու բազմազանության ոլորտում մեր հանձնառության վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում, դիմեք ձեր ղեկավարին կամ այցելեք Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մեր պորտալ:

ՇՈՒՐՋՕՐՅԱ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Iron Mountain-ում ոչինչ ավելի կարևոր չէ, քան մեր առողջությունը, անվտանգությունն ու ապահովությունը: Երբ չենք կարողանում հետևել մեր ընթացակարգերին, վտանգի տակ ենք դնում մեր ամենակարևոր ռեսուրսը՝ Mountain-ցիներին: Մենք քրտնաջան աշխատում ենք առողջ, անվտանգ և ապահով աշխատանքային միջավայր ապահովելու համար, որպեսզի լինենք ավելի ներգրավված, արդյունավետ և կենտրոնացած՝ մեր հաճախորդներին զոհացնելու հարցում:

Ինչպես ենք մենք հաշվետու

Iron Mountain-ում անվտանգությունը անվիճելի է: Ոչ մի գործառնական թիրախ կամ չափանիշ ավելի կարևոր չէ, քան Mountain-ցու անվտանգությունն ու ապահովությունը:

Դա նշանակում է, որ մենք.

Ապահովում ենք անվտանգությունը
– Մշտապես պահպանում ենք ընկերության անվտանգության պահանջները
– Հաղորդում ենք բոլոր միջադեպերի և հնարավոր խնդիրների մասին
– Միջամտում ենք ցանկացած անապահով գործողության կամ պայմանի
– Ամեն օր գտնում ենք անվտանգության բարելավման ուղիներ
– Ստանձնում ենք մեր և մեր շրջապատի անվտանգության ապահովման պատասխանատվությունը
– Ձեռնամուխ ենք լինում միայն այն աշխատանքին, որի համար մասնագիտական ուսուցում ենք ստացել
– Դադարեցնում ենք այն աշխատանքը, որը հնարավոր չէ կատարել անվտանգ

Ֆիզիկական անվտանգության պահպանում
– Միշտ կողպեք մեքենաները, ակտիվացրեք ձայնային ազդանշանները և ապահով պահեք Iron Mountain-ի սարքավորումները (օրինակ՝ դյուրակիր համակարգիչները և բջջային հեռախոսները)
– Մի թողեք դռները բաց կամ թույլ մի տվեք, որ որևէ մեկը մեզ հետ միասին մուտք գործի մեր արտադրական օբյեկտներ
– Հաղորդեք կամ քաղաքավարի ձևով դիմեք յուրաքանչյուրին, ով չի կրում Iron Mountain-ի տարբերանշան

Անզիջում եղեք թմրանյութերի կամ ալկոհոլի ազդեցությունից ազատ աշխատանքային միջավայր ունենալու հարցում
– Մի ժամանեք աշխատանքի թմրանյութերի կամ ալկոհոլի ազդեցության տակ գտնվելիս
– Թմրամիջոցների կամ ալկոհոլի հետ կապված խնդրի վերաբերյալ դիմեք ձեր ղեկավարին կամ կադրերի բաժին՝ ընկերությունն ունի միջոցներ օգնելու համար
– Բարձրաձայնեք, եթե տեսնում եք, որ գործընկերը նման որևէ ազդեցության տակ է աշխատանքային վայրում

«Յուրաքանչյուր Mountain-ցի գիտի, որ անվտանգությունը անվիճելի է»:

Iron Mountain-ի Անվտանգության բաժին

Իմանալ ավելին.
Անվտանգության, ապահովության կամ թմրանյութերի և ալկոհոլի ազդեցությունից ազատ աշխատանքային միջավայրի մեր քաղաքականության վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում դիմեք ձեր ղեկավարին:

ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՆՎՏԱՆԳ և ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Մեր տեխնոլոգիաները և տեղեկատվական համակարգերը օգնում են մեզ ավելի արդյունավետ աշխատել, ավելի արդյունավետ հաղորդակցվել և ավելի լավ ծառայել մեր հաճախորդներին: Պաշտպանելով մեր տեխնոլոգիան և կիրառելով այն պատշաճ կերպով՝ մենք **արժեք ենք ստեղծում հաճախորդի համար՝** գոհացնելով մեր հաճախորդներին և միևնույն ժամանակ նորարարությունների միջոցով հոգալով նրանց կարիքները:

Ինչպես ենք մենք հաշվետու

Մեր տեխնոլոգիայի և տեղեկատվական համակարգերի ոչ պատշաճ օգտագործումը կարող է սպառել ռեսուրսները, վտանգել մեր անվտանգությունը և հանգեցնել մեր ապրանքանիշի և հեղինակության տևական վնասման:

ՈՐՊԵՍԶԻ ԴԱ ՏԵՂԻ ՉՈՒՆԵՆԱ, ՄԵՆՔ.

- Տրամադրում ենք համակարգի մուտքը միայն լիազորված անձանց և դադարեցնում՝ երբ այն այլևս անհրաժեշտ չէ
- Չենք տեղադրում գաղտնի տեղեկությունները չհաստատված ինտերնետային կամ սոցիալական կայքերում
- Չենք ուղարկում անպարկեշտ կամ վիրավորական բովանդակություն ունեցող հաղորդագրություններ
- Նոր համակարգեր ընտրելիս և շահագործելիս հաշվի ենք առնում գաղտնիության կանոնները
- Հետևում ենք ընթացակարգերին՝ համոզվելու համար, որ նախքան սարքավորումները շահագործումից հանելը տվյալները անվտանգ հեռացվում են
- Նվազագույնի ենք հասցնում մեր տեխնոլոգիայի և տեղեկատվական համակարգերի ոչ բիզնեսի համար օգտագործումը

Տեղեկատվական անվտանգություն

Մենք ավելի ու ավելի ենք կախված մեր ցանցերից և դրանցում առկա տվյալներից: Հակերները, ապօրինի ներխուժումները և անվտանգության բացթողումները կարևորագույն ռիսկեր են, որոնք մենք պետք է շարունակաբար վերահսկենք և լուծենք:

Տեղեկատվական համակարգերն ու տվյալները անվտանգ պահելու համար մենք.
- Ժամանակին ավարտում ենք տեղեկատվական անվտանգության բոլոր դասընթացները
- Խուսափում ենք անհարկի կայքեր այցելելուց
- Չենք տեղադրում չհաստատված ծրագրակազմեր և չենք բացում կասկածելի կցված նյութեր
- Գաղտնի ենք պահում մեր մուտքի տվյալները
- Անհատական սարքերը միացնում ենք Iron Mountain ցանցերին միայն թույլտվության դեպքում
- Զգոն ենք ֆիշինգային գրոհների կամ մեր համակարգեր կամ հաշիվներ ներթափանցելու այլ փորձերի հանդեպ

Իմանալ ավելին.

Տեղեկատվական անվտանգության կամ մեր տեխնոլոգիայի և տեղեկատվական համակարգերի ընդունելի օգտագործման վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում դիմեք ձեր ղեկավարին և կարդացեք մեր Ընդունելի օգտագործման քաղաքականությունը:



ՄԵՐ ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Մեր գաղտնի բիզնես տեղեկատվությունը և մտավոր սեփականությունը կարևոր ակտիվներ են, որոնց զարգացման համար պահանջվել է տասնամյակներ: Առանց դրանց մենք չէինք կարող շարունակել նորարարությունները, բարելավել մեր ծառայությունները և գոհացնել մեր հաճախորդներին: Ահա թե ինչու մենք պետք է ամեն ինչ անենք, որպեսզի այդ մտավոր ակտիվները լինեն ապահով և չարաշահումներից պաշտպանված:

Ինչպես ենք մենք հաշվետու

Մենք բոլորս ունենք կարևոր պարտականություն՝ պաշտպանելու մեր գաղտնի տեղեկատվությունը և մտավոր սեփականությունը չարաշահումից կամ չարտոնված տարածումից:

ՈՐՊԵՍԶԻ ԿԱՏԱՐԵՆՔ ԱՅՍ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵՆՔ.

- Տեղեկատվությունը կիսում ենք միայն լիազորված անձանց հետ, ովքեր ունեն դրա օրինական բիզնես կարիքը
- Նախքան մեր ընկերության սահմաններից դուրս գաղտնի կամ գույքային տեղեկատվություն հրապարակելը ապահովում ենք չբացահայտման մասին պայմանագրերի առկայությունը
- Պահպանում ենք փաստաթղթերը, տվյալները և սարքերը՝ համաձայն մեր անվտանգության քաղաքականության
- Թղթային փաստաթղթերը ոչնչացնում ենք միայն մեր անվտանգ մանրացման արկղերի միջոցով
- Խուսափում ենք գաղտնի տեղեկատվության հանրային քննարկումներից և քայլեր ձեռնարկում, որպեսզի մարդիկ չկարողանան դրանք դիտել մեր շարժական սարքերում
- Զեկուցում ենք չարտոնված օգտագործման կամ տարածման մասին ղեկավարությանը, Գաղտնիության պաշտպանության և պահանջների պահպանման բաժին կամ Անվտանգության, ռիսկի և ապահովության բաժին

Գաղտնի տեղեկատվությունը և մտավոր սեփականությունը ներառում է...

- Ռազմավարական փաստաթղթեր
- Պայմանագրեր
- Հաճախորդների ցուցակներ
- Գնացուցակներ
- Աշխատահոսքեր և գործող ընթացակարգեր
- Շուկայավարման ծրագրեր
- Ոչ հանրային ֆինանսական տեղեկատվություն կամ կանխատեսումներ
- Տեղեկատվություն միավորումների և կլանումների մասին
- Հետաքննման և աուդիտի նյութեր
- Աշխատողների հետ կապված տեղեկատվություն

Իմանալ ավելին.

Գաղտնի և ծառայողական տեղեկատվության վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում կարդացեք մեր Տեղեկատվության դասակարգման և վարման քաղաքականությունը կամ դիմեք Գաղտնիության պաշտպանության և պահանջների պահպանման բաժին:

ՄԵՐ ԱՄԵՆԱԱՐԺԵՔԱՎՈՐ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ

Մեր արժեքը՝ **Սեփական անվտանգությունն ու ապահովությունը,** հաճախորդներին և աշխատակիցներին տրված խոստման հիմքում է: Ապահով պահելով մեր արտադրական օբյեկտները և դրանց լրակազմը, և զերծ պահելով մեր ընկերությունը գողությունից, խարդախությունից և վնասներից՝ մենք կարող ենք կատարել մեր ստանձնած պարտավորությունները և հուսալիորեն ֆինանսավորել մեր գործողությունները:

Ինչպես ենք մենք հաշվետու

Մենք մշտապես գնահատում ենք ռիսկերը և բարելավում վերահսկողությունը, որպեսզի օգնենք պաշտպանել մեր ընկերությունը և նրա ակտիվները:

ԴԱ ԿՇԱՆԱԿՈՒՄ Է, ՈՐ ՄԵՆՔ.

- Մշտապես կրում ենք Iron Mountain-ի տարբերանշանը և ստուգում, որ մյուսները նույնպես այն կրեն
- Անմիջապես հաղորդում ահազանգման համակարգի կամ հրդեհաշիջման սարքավորումների վնասված լինելու մասին
- Զգոն ենք մեր արտադրական օբյեկտներում և շրջակայքում գտնվող չարտոնված անձանց նկատմամբ
- Համոզվում ենք, որ ընկերության միջոցներն օգտագործվում են միայն բիզնեսի և ոչ թե անձնական նպատակների համար
- Ամբողջությամբ և ճշգրիտ ներկայացնում ենք ուղևորության, ժամանցի և այլ ծախսերը
- Միշտ ստուգում ենք մեր աշխատակիցների ծախսերի հաշվետվությունները
- Ընկերության ակտիվների գնումները միշտ կատարում ենք Գնումների վարչության հետ խորհրդակցելով

Խարդախության առաջին թշնամին. պարկեշտ Mountain-ցին է

Կեղծիքը, անհիմն ծախսը ու չարաշահումը տարբեր ձևերով կարող են լուրջ ռիսկի ենթարկել մեր բիզնեսը և գործունեությունը: Մեր Կանոնակարգն ու արժեքները կյանքի կոչելու համար ամենաարդյունավետ միջոցը Mountain-ցու հանձնառությունն է՝ այն կանխելու, հայտնաբերելու և շտկելու:

Պատասխանատվություն ստանձնել նշանակում է անհապաղ զգուշացնել ղեկավարին կամ էթիկայի թեժ գիծ ցանկացած գործողության վերաբերյալ, որը կարող է վկայել հանցագործության մասին, ինչպիսին է խարդախությունը կամ փողերի լվացումը, այդ թվում՝

- Ընկերության գրառումները կեղծելը կամ անտեղի փոխելը
- Ծախսերի հայտերը կեղծելը
- Ընկերության ակտիվները անձնական շահերի համար յուրացնելը կամ օգտագործելը
- Կեղծ հայտեր կամ հաշիվ-ապրանքագրեր կազմելը կամ վճարելը
- Պարտավորությունները կամ վնասները միտումնավոր կերպով թերհայտարարագրելը կամ թաքցնելը
- Միջոցները անկանոն եղանակով փոխանցելը
- Թերի կամ խեղաթյուրված տեղեկատվության օգնությամբ հաճախորդներ ներգրավելը

Իմանալ ավելին.

Մեր ակտիվները չարաշահումից կամ կեղծիքներից պաշտպանելու վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում դիմեք ձեր ղեկավարին և կարդացեք մեր Արտադրական օբյեկտների գծով քաղաքականությունը և Աշխատանքային կարգապահության քաղաքականությունը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՁԵՎՈՎ

Սոցիալական ցանցերը հզոր գործիք են, որը մեզ հնարավորություն է տալիս հեշտությամբ փոխանակել տեղեկատվությունը և արդյունավետորեն համագործակցել մեր հաճախորդների և այլ շահագրգիռ կողմերի հետ: Չարաշահումը, սակայն, կարող է վնաս հասցնել մեր աշխատակիցներին և ռիսկի տակ դնել մեր տեղեկատվությունն ու հեղինակությունը: Քանի որ սոցիալական ցանցերն ավելի ու ավելի կարևոր դեր են խաղում մեր անձնական և մասնագիտական կյանքում, կարևոր է օգտագործել դրանց ողջ ներուժը՝ միաժամանակ զգուշանալով հնարավոր վտանգներից:

Ինչպես ենք մենք հաշվետու

Սոցիալական ցանցերի արդյունավետ և պատասխանատու օգտագործումը նշանակում է, որ մենք՝

- Պաշտպանում ենք մեր հաշվի մուտքի տվյալները գողությունից կամ չարտոնված օգտագործումից
- Պահպանում ենք քաղաքավարությունը և արհեստավարժությունը առցանց շփումներում
- Չենք հրապարակում ընկերության գաղտնի տեղեկատվությունը սոցիալական ցանցերում
- Չենք օգտագործում սոցիալական ցանցերը՝ հետամտման, ահաբեկումների կամ այնպիսի գործողությունների համար, որոնք անօրինական են կամ հակասում են մեր Կանոնակարգին
- Արձագանքում ենք հաճախորդներին, երբ նրանք մեզ հետ կապվում են սոցիալական ցանցերի միջոցով, բայց ուղղորդում ենք նրանց Հաճախորդների աջակցման բաժին՝ նրանց խնդիրները լուծելու համար
- Մեր ընկերության կամ ծառայությունների մասին հաղորդագրություն հրապարակելիս ներկայանում ենք որպես Iron Mountain-ի աշխատակիցներ
- Նշում ենք, որ մեր արտահայտած կարծիքը անձնական է և չի պատկանում Iron Mountain-ին
- Աշխատանքի վերաբերյալ որոշումներ կայացնելու համար սոցիալական ցանցերի տեղեկատվությունը օգտագործելիս հետևում ենք Իրավական բաժնի և Կադրերի բաժնի համապատասխան ցուցումներին

Իմանալ ավելին.
Սոցիալական ցանցերի արդյունավետ և պատասխանատու օգտագործման վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում դիմեք ձեր ղեկավարին և կարդացեք մեր Սոցիալական մեդիայի քաղաքականությունը:

ԱԶՆԻՎ ՎԱՃԱՌՔ ԵՎ ՇՈՒԿԱՅԱՎԱՐՈՒՄ

Որպես Mountain-ցիներ՝ մենք շատ հպարտ ենք մեր ծառայությունների որակով և այն արժեքով, որը մենք տալիս ենք մեր հաճախորդներին: Փոխանցելով դա ազնվորեն և առանց չափազանցության՝ մենք վստահություն ենք ձևավորում մեր ապրանքանիշի և շուկայի նկատմամբ: Անկախ նրանից, թե դուք վաճառքի կամ շուկայավարման գործով եք զբաղված, մեր ընկերությունից դուրս յուրաքանչյուր փոխգործակցություն հնարավորություն է Iron Mountain-ի մասին կայուն դրական տպավորություն թողնելու համար:

Ինչպես ենք մենք հաշվետու

Վաճառքի և շուկայավարման ժամանակ մենք ստեղծում ենք արժեք հաճախորդի համար՝

– Ներկայացնելով մեր ուժեղ կողմերը՝ մրցակիցներին վարկաբեկելու փոխարեն
– Չխեղաթյուրելով և չչափազանցնելով մեր ծառայությունների նկարագիրը
– Երբեք չենք դիմում բամբասանքի, չենք տարածում կեղծ տեղեկություն կամ ապօրինի փաստաթղթեր՝ հաճախորդներին ներգրավելու համար
– Հարգում ենք բոլոր հեղինակային իրավունքները, տարբերանշանները և այլ մտավոր սեփականությունը
– Հետևում ենք կիրառելի բոլոր օրենքներին և ընկերության քաղաքականությանը՝ կապված հետևյալի հետ.
  · Հաճախորդների հետ կապեր և հակասպամ
  · Ծանուցման և համաձայնության պահանջներ
  · Մարքեթինգի կոնտակտային նախապատվություններ

Իմանալ ավելին.

Վաճառքի և շուկայավարման հետ կապված հարցեր ունենալու դեպքում դիմեք ձեր ղեկավարին և կարդացեք մեր Հակամենաշնորհային և արդար մրցակցության քաղաքականությունը: Կարդացեք նաև Կանոնակարգի «Մրցակցային տեղեկատվության հավաքագրում» բաժինը:

ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՁԵԱՎՈՐՈՒՄ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՄՈՏ ԵՎ ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

IRON MOUNTAIN-Ի ԱՇԽԱՐՀԸ ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ՄԵՐ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ

60 Գաղտնիության պահպանում

62 Շրջակա միջավայրի պահպանում և աջակցություն մեր համայնքներին

64 Մարդու իրավունքների հարգում և ժամանակակից ստրկության կանխում

66 Ճիշտ գործընկերների ընտրություն

68 Մեր ապրանքանիշի և հեղինակության պահպանում

70 Քաղաքականությունը աշխատավայրում և դրսում

72 Ինսայդերական գործարքների արգելում

ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Մեր գործողությունների հիմքում մեր հաճախորդների, Mountaineer-ցի գործընկերների և բիզնես գործընկերների անձնական տվյալների պաշտպանությունն է: Հարգելով անձնական տվյալների գաղտնիությունը՝ մենք վստահություն ենք ստեղծում և բարձրացնում ենք մեր հեղինակությունը որպես ընկերություն, որի հետ մարդիկ նախընտրում են բիզնես անել: Այդ պատճառներից ելնելով, կարևոր է, որ մենք օգտագործենք անձնական տվյալները միայն օրինական բիզնեսի նպատակների համար և պաշտպանենք դրանք չարտոնված մուտքից, փոփոխությունից կամ բացահայտումից:

Ինչպես ենք մենք հաշվետու

Մենք հանձնառու ենք պահպանել գաղտնիության և տվյալների պաշտպանության բոլոր կիրառելի պահանջները:

ԴԱ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է, ՈՐ ՄԵՆՔ.

- Ճանաչում ենք «անձնական տվյալները» և դրանց ձևերի բազմազանությունը
- Մշակում ենք անձնական տվյալները օրինական նպատակներով՝ համաձայն մեր պայմանագրերի և օրենքի
- Ապահով և պատասխանատու կերպով պահում և փոխանցում ենք անձնական տվյալները
- Տրամադրում ենք անձնական տվյալները միայն նրանց, ովքեր դրանք պետք է տեսնեն բիզնեսի նպատակով
- Անձնական տվյալները տրամադրում ենք միայն գրավոր պայմանագիր կնքած երրորդ անձանց
- Նախքան անձնական տվյալները երկրի սահմաններից դուրս փոխանցելը, դրանց մուտք գործելը կամ դիտելը՝ խորհրդակցում ենք Գաղտնիության պաշտպանության և պահանջների պահպանման բաժնի հետ
- Անձնական տվյալների կորստի կամ չարտոնված օգտագործման մասին անմիջապես հաղորդում ենք ղեկավարին, Անվտանգության, ռիսկի և ապահովության բաժին կամ Գաղտնիության պաշտպանության և պահանջների պահպանման բաժին

Աշխատողի անձնական տվյալներ

Երկրների մեծ մասում մենք ունենք լրացուցիչ պարտավորություններ աշխատողների տվյալների վերաբերյալ, այդ թվում՝

- Աշխատողներին և աշխատանքի դիմողներին գաղտնիության վերաբերյալ հստակ և ճշգրիտ ծանուցումների տրամադրում
- Մինչ նոր SS ծրագրեր կամ համակարգեր օգտագործելը կամ մասնավոր տվյալներ մշակող ընկերությունների հետ աշխատելը՝ այդ մասին հաղորդում Գաղտնիության պաշտպանության և պահանջների պահպանման բաժին
- Անձնական տվյալների ոչնչացում, երբ դրանք այլևս անհրաժեշտ չեն՝ հետևելով մեր ընկերության տվյալների պահպանման պահանջներին

«Անհատական տվյալների» սահմանումը տարբեր է ամբողջ աշխարհում

Ընդհանուր առմամբ, դա վերաբերում է տեղեկատվությանը, որը կարող է ինչ-որ մեկին ուղղակիորեն կամ անուղղակիորեն նույնականացնել:

Օրինակները ներառում են.

- Անուն, ազգանուն
- Հասցե
- Հեռախոսահամար
- Աշխատողի նույնականացման փաստաթուղթ
- Էլ.փոստ
- IP հասցե
- Բանկի կամ կրեդիտ քարտի վերաբերյալ տեղեկություններ
- Ապահովագրական պայմանագրի համար
- Լուսանկար
- Առողջապահական կամ բժշկական տեղեկատվություն
- Գենետիկական տեղեկատվություն
- Կենսաչափական տեղեկատվություն
- Աշխարհագրական տեղորոշման տվյալներ
- Ջնարկչի պատմություն
- Մուտք գործելու նույնականացման տվյալներ կամ էկրանի առցանց անվանում

Իմանալ ավելին.

Տվյալների գաղտնիության վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում դիմեք ձեր ղեկավարին կամ Գաղտնիության պաշտպանության և պահանջների պահպանման բաժին և կարդացեք մեր Գաղտնիության պահպանման մասին քաղաքականությունը:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Ե՛վ որպես ընկերություն, և՛ որպես անհատ Mountain-ցի, մենք պարտավոր ենք դրական փոփոխություններ մտցնել համընդհանուր և տեղական մակարդակներում: Մենք դրան հասնում ենք այն համայնքների հետ շփման միջոցով, որտեղ մենք ապրում և գործում ենք, և մշակելով լուծումներ, որոնք բարձրացնում են կայունությունը և նվազագույնի հասցնում շրջակա միջավայրի վրա ազդեցությունը:

Ինչպես ենք մենք հաշվետու

Մենք աշխատում ենք լինել շրջակա միջավայրի լավ պահպանող և լավ գործընկեր մեր համայնքների համար:

ԴԱ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է, ՈՐ ՄԵՆՔ.

- Հետևում ենք բոլոր բնապահպանական օրենքներին և կանոնակարգերին, որտեղ էլ որ գործենք
- Բացահայտում ենք մեր բիզնեսում թափոններն ու աղտոտվածությունը նվազեցնելու հնարավորությունները
- Օգնում ենք պահպանել մեր պատմական ժառանգությունը «Կենդանի ժառանգություն» ծրագրի միջոցով
- Խրախուսում ենք Mountain-ցիներին արձակուրդ վերցնել կամավոր աշխատանքի համար
- Հաշվետվություններ ենք հրապարակում՝ բնապահպանական նախաձեռնությունների, կորպորատիվ պատասխանատվության ծրագրերի և բարեգործական ներդրումների գծով մեր ընկերության առաջընթացի մասին

Իմանալ ավելին

Կայունության կամ բնապահպանական և կորպորատիվ պատասխանատվության մեր ծրագրերի վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում կարդացեք մեր Կորպորատիվ պատասխանատվության մասին զեկույցը:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐԳՈՒՄ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՏՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՈՒՄ

Մարդու իրավունքներին աջակցելը և հարգելը խոստում է, որը մենք տալիս ենք մեր կոլեկտիվին և մեր գլոբալ համայնքներին: Մենք հավատում ենք, որ բոլոր անհատները արժանապատիվ և հարգալից վերաբերմունքի իրավունք ունեն, և պահանջում ենք, որ մեր մատակարարման շղթայի բոլոր բիզնես գործընկերները հավասարապես կիսեն մեր հանձնառությունը այդ բարձր չափանիշներին:

Ինչպես ենք մենք հաշվետու

Մենք վերաբերվում ենք ուրիշներին այնպես, ինչպես ակնկալում ենք, որ մեզ վերաբերվեն և իմաստալից քայլեր ենք ձեռնարկում մարդու իրավունքները պաշտպանելու և ժամանակակից ստրկությունը կանխելու համար:

Որպես մեր հանձնառության մաս՝ մենք.

- Բոլոր Mountain-ցիների համար ապահովում ենք պատշաճ, օրինական աշխատանքային պայմաններ, ժամեր և վարձատրություն
- Երբեք չենք օգտագործում երեխաների, դատապարտյալների կամ ստրուկների աշխատանքը, և գնահատում ենք, թե արդյոք մեր բիզնես գործընկերները աջակցում են մեր այս հանձնառությանը
- Պահանջում ենք, որ երրորդ կողմի ծառայություններ մատուցողները ընդունեն և պահպանեն մեր Մատակարարի վարքականոնները
- Անհապաղ բարձրաձայնում ենք, եթե ականատես ենք կամ կասկածում ենք մարդու իրավունքների խախտումներ

Իմանալ ավելին

Մարդու իրավունքների հանդեպ մեր հանձնառության վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում դիմեք ձեր ղեկավարին և կարդացեք մեր Կորպորատիվ պատասխանատվության մասին զեկույցը և Մատակարարի վարքականոնները:

ՃԻՇՏ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Ճիշտ ընկերությունների հետ համագործակցությունը մեզ հնարավորություն է տալիս արագորեն աճել և մեր հաճախորդներին և աշխատակիցներին առաջարկել առավել նորարարական լուծումներ: Սակայն մենք երբեք չենք դրդի երրորդ կողմերին ներգրավվել այնպիսի գործողություններում, որոնցում մենք ինքներս մեզ հարմար չենք զգում: Եթե մեր գործընկերները չբավարարեն մեր սպասելիքները, կասկածելի վարքի կամ շահերի բախման մեջ ներգրավված լինեն, արդյունքում կտուժենք թե՛ մենք, թե՛ մեր հաճախորդները: Մենք **Պատասխանատվություն ենք ստանձնում՝** ուշադիր ընտրելով մեր գործընկերներին, վերահսկելով նրանց վարքը և, անհրաժեշտության դեպքում, պատասխանատվության ենթարկելով նրանց:

Ինչպես ենք մենք հաշվետու

Մենք պահպանում ենք էթիկայի բարձրագույն չափանիշները և ակնկալում ենք, որ նույնն անեն մեր բիզնես գործընկերները (այդ թվում՝ մատակարարները, գործակալները, պայմանագրային աշխատողները և այլ անձինք, ովքեր աշխատում են մեր անունից):

Դա նշանակում է, որ մենք.

– Հետևում ենք մեր գնումների խիստ գործընթացի յուրաքանչյուր քայլին
– Համոզվում ենք, որ գործընկերները ունեն համապատասխան հմտություններ և փորձառություն աշխատանքի համար
– Համագործակցում ենք միայն այն ընկերությունների հետ, որոնք համապատասխանում են աշխատանքային և մարդու իրավունքների բոլոր գործող օրենքներին
– Հետևում ենք ընկերության հեղինակության, ֆինանսական պատմության կամ պահանջվող վճարման պայմանների մեջ նախազգուշական ռիսկային իրավիճակներին
– Պահանջում ենք գրավոր պայմանագիր, որը.
  - Գործընկերներին կապում է մեր քաղաքականությանն ու Մատակարարի վարքականոնների սկզբունքների հետ
  - Պահանջում է խստորեն պահպանել հակամենաշնորհային, կաշառակերության և ժամանակակից ստրկության դեմ պայքարի օրենքները
  - Սահմանափակում է անձնական տվյալների հավաքումը և օգտագործումը
  - Նախատեսում է գաղտնիության և տվյալների չբացահայտման խիստ պայմաններ
  - Տրամադրում է Iron Mountain-ին աուդիտի և պայմանագրի դադարեցման համապատասխան իրավունքներ

Իմանալ ավելին.

Մեր բիզնես գործընկերներին վերաբերող չափանիշների և մեր ակնկալիքների վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում դիմեք ձեր ղեկավարին կամ Գնումների վարչությանը և կարդացեք Մատակարարի վարքականոնները:

ՄԵՐ ԱՊՐԱՆՔԱՆԻՇԻ ԵՎ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Ազնիվ գործելու մեր արժեքի իրականացումը նշանակում է Iron Mountain-ի մասին ազնիվ, փաստացի տեղեկատվություն տրամադրել մեր յուրաքանչյուր շահառուին: Ճշմարիտ և հուսալի հաղորդակցությունն այն է, ինչը հնարավորություն է տալիս մեր հաճախորդներին և հասարակությանը վստահել մեզ և հավատալ մեր հրապարակած փաստաթղթերին: Այդ պատճառով կարևոր է խոսել դրական, հետևողական ձևով, երբ մենք հաղորդակցվում ենք ընկերության անունից:

Ինչպես ենք մենք հաշվետու

Մենք երբեք չպետք է խոսենք ընկերության անունից, քանի դեռ պաշտոնապես լիազորված չենք դա անել:

ԴԱ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է, ՈՐ ՄԵՆՔ.

- Պատշաճ ձևով փոխանցում ենք ներդրողների, վերլուծաբանների կամ ՁԼՄ-ների բոլոր հարցումները Կորպորատիվ հաղորդակցման կամ Ներդրողների հետ կապերի բաժին:
- Երբեք չենք բացահայտում գաղտնի տեղեկատվությունը
- Չենք օգտագործում մեր ապրանքանիշը կամ տարբերանշանը ոչ օրինական նպատակներով
- Խուսափում ենք տպավորություն ստեղծել, որ մեր անձնական կարծիքը Iron Mountain-ի պաշտոնական դիրքորոշումն է

Իմանալ ավելին.

Մեր ապրանքանիշի և հեղինակության պաշտպանության վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում դիմեք ձեր ղեկավարին, մեր Կորպորատիվ հաղորդակցման բաժին կամ Ներդրողների հետ կապերի բաժին:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ԵՎ ԴՐՍՈՒՄ

Մենք գտնում ենք, որ բաց և առողջ քաղաքական գործընթացը ստեղծում է ավելի արդար, ավելի արդյունավետ հասարակություն: Մենք նաև գտնում ենք, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի արտահայտել իր սեփական համոզմունքները և մասնակցել քաղաքացիական գործերին, բայց աշխատանքի ընթացքում մենք պետք է ուշադիր և ներառական լինենք, երբ քննարկում ենք անձնական քաղաքական հայացքները կամ համոզմունքները:

Ինչպես ենք մենք հաշվետու

Քաղաքական գործընթացներում ակտիվ լինելը կարող է դրական փոփոխություններ մտցնել այն համայնքներում, որտեղ մենք ապրում և աշխատում ենք, բայց պետք է շատ զգույշ լինենք, երբ անձնական քաղաքական սկզբունքները աշխատավայր ենք բերում:

ԴԱ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է, ՈՐ ՄԵՆՔ.

- Երբեք չենք օգտագործում ընկերության ռեսուրսները, ներառյալ աշխատանքի ժամանակը և Iron Mountain-ի ֆոնդերը անձնական քաղաքական հայացքները կամ համոզմունքները առաջ մղելու համար
- Քայլեր ենք ձեռնարկում (նույնիսկ աշխատանքից դուրս գործունեության ընթացքում), որպեսզի անձնական քաղաքական համոզմունքները չընկալվեն որպես ընկերության պաշտոնական դիրքորոշումներ
- Աշխատանքի ընթացքում չենք զբաղվում քարոզչությամբ կամ դրամահավաքով, չենք միջնորդում քաղաքական նպատակների կամ թեկնածուների օգտին
- Բարձրաձայնում ենք, եթե ինչ-որ մեկն օգտագործում է Iron Mountain-ի անունը՝ անձնական քաղաքական դիրքորոշումը առաջ մղելու համար
- Քաղաքական միջոցառումներին ներկա գտնվելիս խուսափում ենք Iron Mountain ապրանքանիշի հագուստ կրելուց
- Քաղաքական որևէ շարժմանը կամ թեկնածուին սատարելիս օգտագործում ենք անձնական (ոչ թե Iron Mountain-ի) կոնտակտային տվյալները

Իմանալ ավելին.

Քաղաքականությանը և կառավարության գործերին մասնակցելու վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում դիմեք ձեր ղեկավարին և կարդացեք մեր Քաղաքական ներդրումների քաղաքականությունը:

ԻՆՍԱՅԴԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՐԳԵԼՈՒՄ

Որպես աշխատակիցներ՝ մեզ կարող է հասանելի լինել տեղեկատվություն, որը կարող է օգտագործվել Iron Mountain-ի կամ այլ ընկերությունների մասնակցությամբ ներդրումների մասին որոշումների վրա ազդելու համար: **Անվտանգության և ապահովության պահպանման** մեր արժեքը նշանակում է մեծապես հոգ տանել նյութական, ոչ հրապարակային տեղեկատվության և ներքին տեղեկատվության պաշտպանության մասին՝ չօգտագործել այն անձնական շահերի համար կամ չկիսել ուրիշների հետ, որպեսզի նրանք դա անեն:

Ինչպես ենք մենք հաշվետու

Ինսայդերական գործարքները խախտում են մեր ներդրողների և շուկայի վստահությունը:

Կանխեք ներքին տեղեկատվության արտահոսքը՝
– Կիսելով այն միայն նրանց հետ, ովքեր պետք է իմանան
– Չխոսելով այդ մասին ընտանիքի անդամների կամ ընկերների հետ
– Երբեք չքննարկելով այն հասարակության մեջ կամ սոցիալական ցանցերում
– Անվտանգ պահելով. դա նշանակում է դարակների կամ գրասենյակի դռների կողպում, նոթբուքերի և շարժական սարքերի անվտանգ պահում

Ներքին տեղեկատվությունը ներառում է.

– Միավորման և կլանման ծրագրերը
– Կանխատեսվող շահույթը կամ վնասը
– Ապրանքի կամ ծառայության նշանակալի գործարկումներ
– Գործադիր ղեկավարության փոփոխություններ
– Կորպորատիվ խոշոր վերակազմակերպումներ
– Նշանակալից դատական գործընթացներ կամ իրավական կարգավորումներ
– Շահաբաժնի կամ հարկային ռազմավարության փոփոխություններ

Իմանալ ավելին.
Ինսայդերական գործարքների վերաբերյալ հարցեր ունենալու դեպքում դիմեք Իրավաբանական վարչություն և կարդացեք մեր Ներքին առևտրային ընթացակարգերի քաղաքականությունը:

IRON MOUNTAIN-Ի ԷԹԻԿԱՅԻ ԹԵԺ ԳԻԾ

Դուք կարող եք զեկուցել էթիկական մտահոգությունների կամ խախտումների մասին և հարցեր տալ՝ շուրջօրյա եղանակով (օրը 24 ժամ, տարին 365 օր) զանգահարելով Iron Mountain էթիկայի թեժ գիծ: Էթիկայի թեժ գիծը կառավարվում է անկախ ընկերության կողմից, և (եթե դա թույլատրվում է օրենքով) դուք կարող եք մնալ ամբողջությամբ անանուն:

ՀԵՌԱԽՈՍՈՎ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՀԱՄԱՐ.

Զանգահարեք հետևյալ էջերում նշված ձեր երկրի և մատակարարի համարին: *(Եթե էթիկայի թեժ գիծ նշված համարով զանգահարել չի հաջողվում, խնդրում ենք սպուգել համարը www.IMEthicsLine.com կայքում)*

ԱՌՑԱՆՑ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՀԱՄԱՐ.

Ներկայացրեք հաղորդում՝ այցելելով **www.IMEthicsLine.com կայքը:**

Արգենտինա	+0 800 333 0095
Արգենտինա	+00 800 1777 9999
Հայաստան	+1 720 514 4400
Ավստրալիա	+0011 800 1777 9999
Ավստրալիա	+1 800 763 983
Ավստրիա	+800 281119
Բելառուս	+8 820 0011 0404
Բելգիա	+0800 260 39
Բելգիա *(Comgen Brussels)*	+00 800 1777 999
Բրազիլիա	+0800 892 2299
Բրազիլիա	+0021 800 1777 999
Բրազիլիա *(Ռիո դե ժանեյրո)*	+55 212018 1111
Բուլղարիա	+0800 46038
Կանադա	+800 461 9330
Կանադա	+1 800 235 6302
Չիլի	+1230 020 3559
Չինաստան՝ բոլոր օպերատորներ	+400 120 3062
Չինաստան՝ միայն Telecom և Unicom	+00 800 1777 9999
Կոլումբիա	+844 397 3235
Կոլումբիա *(Բոգոտա)*	+57 13816523
Խորվաթիա	+0800 806 520
Կիպրոս	+8009 4544

Չեխիայի Հանրապետություն	+800 701 383
Դանիա	+8082 0058
Դանիա	+00 800 777 9999
Դուբայ	+8000 3570 3169
Էստոնիա	+800 0100 431
Ֆինլանդիա	+0800 07 635
Ֆինլանդիա *(Sonera)*	+990 800 1777 9999
Ֆրանսիա	+805 080339
Ֆրանսիա *(ներառյալ Անդորրա, Կորսիկա, Մոնակո)*	+00 800 1777 9999
Գերմանիա	+0800 181 2396
Գերմանիա *(Deutsche Bundespost Telekom)*	+00 800 1777 9999
Հունաստան	+00800 1809 202 5606
Հոնկոնգ *(բոլոր օպերատորներ)*	+800 906 069
Հոնկոնգ *(CW)*	+001 800 1777 9999
Հունգարիա *(բոլոր օպերատորներ)*	+36 212111440
Հունգարիա	+00 800 1777 9999
Հնդկաստան *(VSNL)*	+000 800 100 3428
Հնդկաստան *(բոլոր օպերատորներ)*	+000 800 100 4175
Հնդկաստան *(Սալկաթա)*	+91 337 1279005
Ինդոնեզիա	+803 015 203 5129
Ինդոնեզիա *(Ջակարտա)*	+62 21 50851420
Իռլանդիա *(բոլոր օպերատորներ)*	+1800 904 177

Իռլանդիա *(Telecom Eireann)*	+00 800 1777 9999
Ղազախստան	+8 800 333 3511
Լատվիա	+8000 4721
Լիտվա	+8 800 30451
Մալայզիա	+60 0 1548770383
Մալայզիա *(Malaysia Telecom)*	+00 800 1777 9999
Մեքսիկա *(բոլոր օպերատորներ)*	+800 681 6945
Մեքսիկա *(Telmex)*	+001 866 376 0139
Նիդերլանդներ *(բոլոր օպերատորներ)*	+0 800 022 0441
Նիդերլանդներ *(Telecom Netherlands)*	+00 800 1777 9999
Նոր Զելանդիա *(բոլոր օպերատորներ)*	+0800 002 341
Նոր Զելանդիա *(Telecom)*	+00 800 1777 9999
Նորվեգիա *(բոլոր օպերատորներ)*	+800 24 664
Նորվեգիա *(Telenor Nett)*	+00 800 1777 9999
Պերու	+0800 78323
Ֆիլիպիններ *(Մանիլա՝ բոլոր օպերատորներ)*	+63 2 8626 3049
Ֆիլիպիններ *(PLDT)*	+00 800 1777 9999
Լեհաստան *(բոլոր օպերատորներ)*	+00 800 141 0213
Լեհաստան *(Polish Telecom)*	+00 800 111 3819
Ռումինիա	+0 800 360 228
Ռուսաստան	+8 800 100 9615
Սերբիա	+0800 190 167

Սինգապուր *(բոլոր օպերատորներ)*	+800 852 3912
Սինգապուր *(Singapore Telecom)*	+001 800 1777 9999
Սլովակիա	+0 800 002 487
Հարավային Աֆրիկայի Հանրապետություն *(Յոհաննեսբուրգ՝ բոլոր օպերատորներ)*	+27 105004106
Հարավային Աֆրիկայի Հանրապետություն *(Posts & Telecom)*	+00 800 1777 9999
Հարավային Կորեա *(բոլոր օպերատորներ)*	+080 808 0574
Հարավային Կորեա *(Dacom)*	+002 800 1777 9999
Իսպանիա	+900 905460
Իսպանիա *(ներառյալ Կանարյան կղզիներ) - Telefonica*	+00 800 1777 9999
Շվեդիա	+020 889 823
Շվեդիա *(Telia Telecom AB)*	+00 800 1777 9999
Շվեյցարիա	+0800 838 835
Շվեյցարիա *(ներառյալ Լիխտենշտեյն)*	+00 800 1777 9999
Թայվան *(բոլոր օպերատորներ)*	+00801 14 7064
Թայվան *(Chunghura Telecom)*	+00 800 1777 9999
Թաիլանդ *(բոլոր օպերատորներ)*	+1 800 012 657
Թաիլանդ *(Comm Authority of Thailand)*	+001 800 1777 9999
Թուրքիա	+90 850 390 2109
Ուկրաինա	+0 800 501134
Միացյալ Թագավորություն	+0 808 189 1053
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	+800 461 9330
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	+1 503 726 2429

Բոլոր մնացած երկրների համար խնդրում ենք այցելել www.IMEthicsLine.com

ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

IRON MOUNTAIN®

One Federal Street
Boston, MA 02110
1.800.899.4766

ironmountain.com